



ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ



ԵԶԱԿԱՆ ՓՈՒՐ ԶԱՆԴԷՍ ՄԲ

ԼԻՏՈՅԻ ՄԷՋ



ՀԱՄԱԿՈՐԾԱՆ պատերազմի աղէտներուն դէմ՝ պատուար մը կանգնելու դիտաւորութեամբ, վենետից Հայրապետն՝ իր ժողովուրդին հետ՝ Յունուար 6ին կատարեցին ուխտ մը Բարձրակալին առջև, խնդրելով իրմէ՝ որ թշնամիի սաւառնակները՝ չի պղծեն վենետիկեան երկիւնքը, և վարը զստուող չընաղ հրաշակերտ ոստանը չաւատաւորեն։ Եւ ուխտին գործադրութեան հաւաստիքը զրուեցաւ՝ կանգնել «Մեծաւկայելու» և հոյակապ տաճար մը»։

Եւ ահա Փետրուար 11ին, տեղւոյս ծիրանաւոր Պատրիարքը, Գեոր. Կոստանտինի քարտուղարին և Տ. Ուկոյի հետ՝ կը հասնէր Լիտոյ, օրհնելու համար եկեղեցավայրի հողը, և ահա ցամաք ելած պահուն՝ ընդառաջ եկեր էին Նորին Պայծառութեան՝ բացի տեղւոյն ժողովուրդապետ Տէր Ռոմէյո Դիցիանէլլոյէն և պատուաւորներէն, Միսիթարեան Հայրերն ու Նորոնձաները, մեծահամբաւ Գատորիին արձանագործը, շատ մը զինուորականներ և ջերմառանդ ու հետաքրքիր ժողովուրդեան բազմութիւն մը։

Հանդէսը շուտով սկսաւ. բաց դաշտին մէջ զրուած պարզ խորանիկ մը, իր ճրագներով և խաչելութեամբ՝ արուճառակը կը ձևացնէր՝ ապագայ որպիսի շքեղ և մեծակառոյց Տաճարի մը... Փոքրիկ և մատաղատի մանկիկներուն ընդոյշ երգ մը սկսաւ բարձրանալ, ծաւալել և յուզեցանմեղ և անկեղծ համերգ մ'էր՝ Տիրամօր ուղղուած։

Երկրին օրհնութենէն վերջ՝ ամբողջ ուղղուեցաւ դէպի տեղական եկեղեցին, ուր Ն. Պ. Պատրիարքը խօսեցաւ համառօտ յորդոր մը ժողովրդեան, բայց մասնաւորապէս մանկիկներուն ուղղուած։ Իր խօսելու և քարոզելու կերպին մէջ՝ ցոյց կու տար հայրական բարի, ազնիւ և ներողամիտ սիրտ մը՝ զորեցուրանքը, կ'արտայայտէր այն փոքրիկ էակներուն հանդէպ՝ որ «հրեշտակներ են»։ Կը յանձնէր ծնողաց պահպանելու զանոնք՝ աւելի խնամքով, աւելի զօրովանքով, քան ո՛ր և է յարգի քար մը։ «Այդ քարը անշունչ, անզգայ իր մ'է՝ թէ և թանկագին։ Բայց որդիները աւելի՛ յարգի են, աւելի սիրելի, շնչաւոր, զգայուն»։

Ամենէն վերջ՝ օրհնեց իր հայրական բոլոր սրտով՝ իր հօտը, մաղթեց անոնց երջանկութիւն և խաղաղութիւն, մինչ ժողովուրդը եկեղեցիէն խոնքրած դուրս կ'ելնէր, բոլորովին գոհ, ուրախ, պարզ և չընաղ հանդէպ մը տպաւորութիւնը մտքին և սրտին մէջ։

*
*

Այս առթիւ կը յիշատակենք նոյն Պատրիարքին հայոց համակրութեան իբր ապացոյց՝ հետեւելը. Բարեկենդանի ժամանակ՝ Փետրուար 16ին, Մուրաթ-Ռաֆայէլեան դպրոցին մէջ՝ հայ և իտալ լիզուներով թէտարոն ձևացուելով, Նորին Պայծառութիւնը հրախրուած էր մասնակցելու այդ հանգէպին։ Սա չի մերժեց խնդիրը, և իր ներկայութեամբը պատուեց այդ հանգէպը, բլլալով միանգամայն քաջալեր՝ ներկայ աշակերտներուն։

Մեր Միաբանութիւնը պատուեց, Ս. Անտոն անապատականի տօնին՝ 16 օրու նուար 1917, գալով Ս. Ղազար և մասնակցելով վանական ճաշին։

ԽՄԲ.

1. Վենետից արդի Պատրիարքը կը կոչուի Մեր. Պետրոս Լա Ֆոնզելն, ծնաւ ի Վիդերպոյ 1880 Նոյեմբ.

Յին, իբրև վենետից Պատրիարք եկաւ 1915 Յուլի 10ին և ծերանաւոր եղաւ 1916 Նոյ. 10ին։